



*Համարը N 659-Ն*

*Տեսակը Պաշտոնական  
Ինկորպորացիա*

*Տիպը Որոշում*

*Կարգավիճակը Չի գործում*

*Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2008.02.01/4(278) Հոդ.33*

*Ընդունման վայրը Երևան*

*Ընդունող մարմինը Հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողով*

*Ընդունման ամսաթիվը 21.12.2007*

*Ստորագրող մարմինը Հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի  
նախագահ*

*Ստորագրման ամսաթիվը 21.12.2007*

*Վավերացնող մարմինը*

*Վավերացման ամսաթիվը*

*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 15.01.2008*

*Ուժը կորցնելու ամսաթիվը 01.02.2022*

**+** Կապեր այլ փաստաթղթերի հետ

**+** Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՆՈՐ ՍՊԱՌՈՂԻ ԿԱՍ ՍՊԱՌՈՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*«Գրանցված է»*

*ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
10 հունվարի 2008 թ.*

*Պետական գրանցման թիվ 60008006*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

21 դեկտեմբերի 2007 թ.  
ք. Երևան

N 659-Ն

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՆՈՐ ՍՊԱՌՈՂԻ ԿԱՍ ՍՊԱՌՈՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները (հավելված):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 15-ից:

**ՀՀ հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի նախագահ՝**

**Ռ. Նազարյան**

Հավելված

Հաստատված է  
ՀՀ հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի  
2007 թվականի դեկտեմբերի 21-ի  
N 659-Ն որոշմամբ

**ՆՈՐ ՍՊԱՌՈՂԻ ԿԱՍ ՍՊԱՌՈՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՎՈՂ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ**

**Գ Լ ՈՒ Խ 1**

**0.4 (0.22) ԿՎ ԼԱՐՄԱՄԲ ՄԻԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՏՆԵՐԻ ԿԱՍ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ  
(վերնագիրը խմբ. 27.06.11 N 308-Ն)**

1. 0,4 (0.22) կՎ լարմամբ միացող առանձնատների կամ առևտրային սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման վճարները (այսուհետ՝ միացման վճար) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$ՄՎ = Վ_{ստ} + Վ_{լրաց} + Վ_{պահուստ} ,$$

որտեղ՝

**Վ<sub>ստ</sub>** - համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմաններում՝ անկախ էլեկտրական ցանցին միացման կետի հեռավորությունից, իսկ համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմանից դուրս՝ էլեկտրական ցանցին միացման կետից մինչև 200 մետր հեռավորության վրա գտնվող սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման վճարի ստանդարտ բաղադրիչն է (ներառյալ, սակայն չսահմանափակվելով նախագծային և նախահաշվային, էլեկտրատեղակայանքների, այդ թվում՝ այլ անձանց էլեկտրատեղակայանքներում բջիջների, էլեկտրոնային առևտրային հաշվառքի սարքի, ավտոմատ անջատիչների ձեռքբերման և տեղակայման, շինարարական (ներառյալ՝ էլեկտրահաղորդման գծի), կարգաբերման և թողարկման ծախսերը)՝ համաձայն N 1 մեթոդիկայի (հավելված):

**Վ<sub>լրաց</sub>** - էլեկտրական ցանցին միացման վճարի լրացուցիչ բաղադրիչն է, որը համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմանում ընդունվում է հավասար գրոյի: Համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմանից դուրս **Վ<sub>լրաց</sub>** -ը ներառում է՝

ա. էլեկտրական ցանցին միացման կետից 200 մետրը գերազանցող՝ սնող էլեկտրահաղորդման գծի կառուցման միջին արժեքը,

բ. սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորմամբ (այսուհետ՝ ՏՏՀ) նոր սպառողի կամ կառուցապատողի կամ սպառողի (այսուհետ՝ Դիմող անձ) կողմից պահանջվածից ավելի բարձր լարման սնող գծի և ենթակայանի կառուցման անհրաժեշտության դեպքում՝ այդ ենթակառուցվածքների կառուցման միջին արժեքը:

**Վ<sub>պահուստ</sub>** -ը սպառման համակարգի պահուստային սնում ապահովող էլեկտրահաղորդման գծի կառուցման միջին արժեքն է:

**(1-ին կետը խմբ. 07.12.11 N 568-Ն, փոփ. 12.02.14 N 17-Ն, 31.05.17 N 219-Ն)**

1.1 **Վ<sub>լրաց</sub>** և **Վ<sub>պահուստ</sub>** բաղադրիչների մեծությունները որոշվում են ըստ կառուցվող գծերի երկարության և կառուցվող ենթակայանի միջին արժեքների: Կառուցվող գծերի և ենթակայանների միավորի միջին արժեքները հրապարակվում են ընկերության պաշտոնական կայքում և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

**(1.1-ին կետը լրաց. 31.05.17 N 219-Ն)**

2. Եթե էլեկտրական ցանցին առանձնատան միացման համար Դիմող անձը պահանջում է 0.4 կՎ-ից բարձր լարմամբ միացում, ապա միացման վճարը որոշվում է առևտրային սպառողների (սպառողներ՝ բացառությամբ բնակչության) համար սույն Հավելվածի համապատասխանաբար 13-րդ կամ 20-րդ, կամ 27-րդ կետերով սահմանված բանաձևերով:

**3. (կետն ուժը կորցրել է 30.05.12 N 188-Ն)**

**(գլուխը խմբ. 27.06.11 N 308-Ն)**

**Գ Լ ՈՒ Խ 2**

6. Բազմաբնակարան շենքերի միացման վճարները որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$U_{\text{վ}} = (\Psi_1 n_1 + \Psi_2 n_2) \cdot Q_{\text{ծթ}} + \sum_{k=1}^{n_3} \Psi_3$$

որտեղ՝

$\Psi_1$ -ը բազմաբնակարան շենքի մեկ բնակարանի կամ առևտրային սպառողի միացման վճարն է (ներառյալ՝ սակայն չսահմանափակվելով, հաշվիչի արկղը, էլեկտրոնային առևտրային հաշվառքի սարքը, ավտոմատ անջատիչները) 10 կՎԱ հզորությամբ միաֆազ միացման համար՝ համաձայն N 2 աղյուսակի (հավելված),

$n_1$ -ը բազմաբնակարան շենքի այն բնակարանների և առևտրային սպառողների գումարային քանակն է, որոնց համար նախատեսված է միաֆազ միացում 10 կՎԱ հզորությամբ,

$\Psi_2$ -ը բազմաբնակարան շենքի մեկ բնակարանի կամ առևտրային սպառողի միացման վճարն է (ներառյալ՝ սակայն չսահմանափակվելով, հաշվիչի արկղը, էլեկտրոնային առևտրային հաշվառքի սարքը, ավտոմատ անջատիչները) 14 կՎԱ հզորությամբ միաֆազ միացման համար՝ համաձայն N 2 աղյուսակի (հավելված),

$n_2$ -ը բազմաբնակարան շենքի այն բնակարանների և առևտրային սպառողների գումարային քանակն է, որոնց համար նախատեսված է միաֆազ միացում 14 կՎԱ հզորությամբ,

$Q_{\text{ծթ}}$ -ն ծախսատարության և թերթեռնվածության գործակիցն է, որը Երևան քաղաքի վարչական տարածքում ընդունվում է հավասար 3-ի, իսկ Հայաստանի Հանրապետության մյուս տարածքներում՝ հավասար 1-ի,

$\Psi_3$ -ը բազմաբնակարան շենքի բնակարանների կամ առևտրային սպառողների (այդ թվում՝ ընդհանուր օգտագործման էլեկտրասարքավորումների) միացման վճարն է (ներառյալ՝ սակայն չսահմանափակվելով, հաշվիչի արկղը, էլեկտրոնային առևտրային հաշվառքի սարքը, ավտոմատ անջատիչները) եռաֆազ (0.4 կՎ լարմամբ) միացման համար, որը հաշվարկվում է սույն Հավելվածի N 1 մեթոդիկայի 2-րդ կետով սահմանված բանաձևով՝ յուրաքանչյուր առևտրային միացման կետի համար առանձին՝ ըստ առևտրային հաշվառքի սարքերի քանակի,

$n_3$ -ը բազմաբնակարան շենքի այն բնակարանների և առևտրային սպառողների գումարային քանակն է, որոնց համար նախատեսված է եռաֆազ (0.4 կՎ լարմամբ) միացում:

6.1 Բազմաբնակարան շենքի առանձնացված միավորների (բնակարաններ, ոչ բնակելի տարածքներ) սեփականության իրավունքի գրանցման օբյեկտ դառնալուց հետո նշված միավորների սեփականատերեր հանդիսացող անձանց կողմից դրանց վերակառուցման արդյունքում ավելացվող նոր միավորների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման վճարները որոշվում են հետևյալ բանաձևերով՝

ա) 10 կՎԱ հզորությամբ միաֆազ միացման դեպքում՝

$$U_{\text{վ1}} = \Psi_1 \cdot Q_{\text{ծթ}},$$

բ) 14 կՎԱ հզորությամբ միաֆազ միացման դեպքում՝

$$U_{\text{վ2}} = \Psi_2 \cdot Q_{\text{ծթ}},$$

գ) 0.4 կՎ լարմամբ միացման դեպքում՝

$$U_{\text{վ3}} = \Psi_3.$$

(6.1-ին կետը լրաց. 28.08.19 N 316-Ն)

6.2 սույն որոշման 6.1 կետի դրույթները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահը էլեկտրական ցանցին միացված բազմաբնակարան շենքերում առանձնացված միավորների (բնակարաններ, ոչ բնակելի տարածքներ) միացման վճարների հաշվարկման վրա:

(6.2-րդ կետը լրաց. 28.08.19 N 316-Ն)

(զլուխը խմբ. 30.05.12 N 188-Ն, 06.03.13 N 63-Ն)

0.4 ԿՎ ԼԱՐՄԱՆ ՑԱՆՅԻՆ ՄԻԱՅՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՄԻԱՅՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ  
(գլուխն ուժը կորցրել է 27.06.11 N 308-Ն)

Գ Լ ՈՒ Խ 4

6(10) ԿՎ ԼԱՐՄԱՄԲ ՄԻԱՅՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՄԻԱՅՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ  
(վերնագիրը խմբ. 07.12.11 N 568-Ն)

13. 6 (10) կՎ լարմամբ միացող առևտրային սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման վճարները (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$ՄՎ = Վ_{ստ} + Վ_{լրաց} + Վ_{պահուստ}$$

որտեղ՝

**Վ<sub>ստ</sub>** - էլեկտրական ցանցին միացման կետից մինչև 1200 մետր հեռավորության վրա գտնվող սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման վճարի ստանդարտ բաղադրիչն է (ներառյալ, սակայն չսահմանափակվելով նախագծային և նախահաշվային, էլեկտրատեղակայանքների, այդ թվում՝ այլ անձանց էլեկտրատեղակայանքներում բջիջների, անջատիչների, էլեկտրոնային առևտրային հաշվառքի սարքի, բացառությամբ՝ սպառողի կողմից տնօրինվող տարածքում տեղակայվող հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների, ձեռքբերման և տեղակայման, շինարարական (ներառյալ՝ էլեկտրահաղորդման գծի), կարգաբերման և թողարկման ծախսերը)՝ համաձայն N 2 մեթոդիկայի (հավելված):

**Վ<sub>լրաց</sub>** - էլեկտրական ցանցին միացման վճարի լրացուցիչ բաղադրիչն է, որը ներառում է՝

1) 1200 մետրը գերազանցող՝ սնող էլեկտրահաղորդման գծի կառուցման միջին արժեքը,

2) համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմանից դուրս՝ ՏՏՀ-ով Դիմող անձի կողմից պահանջվածից ավելի բարձր լարման սնող գծի և ենթակայանի կառուցման անհրաժեշտության դեպքում՝ այդ ենթակառուցվածքների կառուցման միջին արժեքը:

**Վ<sub>պահուստ</sub>** - սպառման համակարգի պահուստային սնում ապահովող էլեկտրահաղորդման գծի կառուցման միջին արժեքն է:

(13-րդ կետը փոփ., լրաց. 12.02.14 N 17-Ն, փոփ. 31.05.17 N 219-Ն)

13.1 Վ<sub>լրաց</sub> և Վ<sub>պահուստ</sub> բաղադրիչների մեծությունները որոշվում են ըստ կառուցվող գծերի երկարության և կառուցվող ենթակայանի միջին արժեքների: Կառուցվող գծերի և ենթակայանների միավորի միջին արժեքները հրապարակվում են ընկերության պաշտոնական կայքում և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

(13.1-ին կետը լրաց. 31.05.17 N 219-Ն)

(գլուխը խմբ. 07.12.11 N 568-Ն)

Գ Լ ՈՒ Խ 5

35 ԿՎ ԼԱՐՄԱՆ ՑԱՆՅԻՆ ՄԻԱՅՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՄԻԱՅՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

20. 35 կՎ լարման ցանցին միացող առևտրային սպառողների սպառման համակարգի միացման վճարները որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$ՄՎ = Վ_{ստ} + Վ_{լրաց},$$

որտեղ՝

**Վ<sub>ստ</sub>** -մինչև 12 կիլոմետր երկարությամբ միաշղթա մեկ օդային գծի կառուցում նախատեսող ստանդարտ միացման համար սահմանված վճարն է՝ համաձայն N 5 աղյուսակի (հավելված):

21. Ստանդարտ միացումը նախատեսում է էլեկտրոնային հաշվիչով հաշվառքային համալիրի տեղադրում:

22. Եթե Դիմող անձի կողմից պահանջվող հզորությունը փոքր է 3000 կՎԱ-ից, ապա ստանդարտ միացման վճարն ընդունվում է 3000 կՎԱ-ի համար սահմանվածին հավասար: Եթե պահանջվող հզորությունը մեծ է 15000 կՎԱ-ից, ապա ստանդարտ միացման վճարն ընդունվում է այդ հզորությունը ապահովելու համար անհրաժեշտ հզորությունների համար սահմանված ստանդարտ միացման վճարների գումարին հավասար:

23. Եթե Դիմող անձի սպառման համակարգի միացումն իրականացվում է սույն Հավելվածի 20-րդ կետով և N 5 աղյուսակով սահմանված ստանդարտ միացման հարաչափերի սահմաններում, ապա Վ<sub>լրաց</sub> -ն ընդունվում է հավասար 0-ի:

24. Եթե միացնող գծի երկարությունը գերազանցում է սույն Հավելվածի 20-րդ կետով սահմանված երկարությունը, ապա

$$V_{\text{լրաց}} = \Delta V X n,$$

որտեղ՝

n - ստանդարտ միացման համար սահմանված երկարությունը գերազանցող յուրաքանչյուր 250 մետր հատվածների քանակն է,

$\Delta V$  - ստանդարտ միացման համար սահմանված երկարությունը գերազանցող յուրաքանչյուր 250 մետր հատվածի համար սահմանված վճարն է (N 5 աղյուսակ):

25. Եթե Դիմող անձի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման նախագծի ՏՏՀ-ով նախատեսված է վերջինիս կողմից պահանջվածից ավելի Բարձր լարման սնող գծի և իջեցնող ենթակայանի կառուցում, ապա  $V_{\text{լրաց}}$  -ն ընդունվում է ՏՏՀ-ով նախատեսվող միացման և սույն Հավելվածի 20-րդ կետով և N 5 աղյուսակով սահմանված ստանդարտ միացման հարաչափերով էլեկտրահաղորդման գծի կառուցման համար հաշվարկված ծախսերի նախահաշվային արժեքների տարբերությանը հավասար:

26. Եթե Դիմող անձի սպառման համակարգի նախագծով նախատեսված է պահուստային սնում, ապա  $V_{\text{լրաց}}$  -ում ներառվում են նաև պահուստային գծերի կառուցման ծախսերն ամբողջությամբ:

**Գ Լ ՈՒ Խ 6**

**110 ԿՎ ԼԱՐՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ**

27. 110 կՎ լարման ցանցին միացող առևտրային սպառողների սպառման համակարգի միացման վճարները որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$ՄՎ = V_{\text{ստ}} + V_{\text{լրաց}},$$

որտեղ՝

$V_{\text{ստ}}$  -մինչև 25 կիլովետր երկարությամբ միաշղթա մեկ օղային գծի կառուցում նախատեսող ստանդարտ միացման համար սահմանված վճարն է՝ համաձայն N 6 աղյուսակի (հավելված):

28. Ստանդարտ միացումը նախատեսում է էլեկտրոնային հաշվիչով հաշվառքային համալիրի տեղադրում:

29. Եթե Դիմող անձի կողմից պահանջվող հզորությունը փոքր է 15 ՄՎԱ-ից, ապա ստանդարտ միացման վճարն ընդունվում է 15 ՄՎԱ-ի համար սահմանվածին հավասար: Եթե պահանջվող հզորությունը մեծ է 50 ՄՎԱ-ից, ապա ստանդարտ միացման վճարը ընդունվում է այդ հզորությունն ապահովելու համար անհրաժեշտ հզորությունների համար սահմանված ստանդարտ միացման վճարների գումարին հավասար:

30. Եթե Դիմող անձի սպառման համակարգի միացումն իրականացվում է սույն Հավելվածի 27-րդ կետով և N 6 աղյուսակով սահմանված ստանդարտ միացման հարաչափերի սահմաններում, ապա  $V_{\text{լրաց}}$  -ն ընդունվում է հավասար 0-ի:

31. Եթե միացնող գծի երկարությունը գերազանցում է սույն Հավելվածի 27-րդ կետով սահմանված երկարությունը, ապա

$$V_{\text{լրաց}} = \Delta V X n,$$

որտեղ՝

n - ստանդարտ միացման համար սահմանված երկարությունը գերազանցող յուրաքանչյուր 500 մետր հատվածների քանակն է,

$\Delta V$  - ստանդարտ միացման համար սահմանված երկարությունը գերազանցող յուրաքանչյուր 500 մետր հատվածի համար սահմանված վճարն է (N 6 աղյուսակ):

32. Եթե Դիմող անձի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման նախագծի ՏՏՀ-ով նախատեսված է վերջինիս կողմից պահանջվածից ավելի Բարձր լարման սնող գծի և իջեցնող ենթակայանի կառուցում, ապա  $V_{\text{լրաց}}$  -ն ընդունվում է ՏՏՀ-ով նախատեսվող միացման և սույն Հավելվածի 27-րդ կետով և N 6 աղյուսակով սահմանված ստանդարտ միացման հարաչափերով էլեկտրահաղորդման գծի կառուցման համար հաշվարկված ծախսերի նախահաշվային արժեքների տարբերությանը հավասար:

33. Եթե Դիմող անձի սպառման համակարգի նախագծով նախատեսված է պահուստային սնում, ապա  $V_{\text{լրաց}}$  -ում ներառվում են նաև պահուստային գծերի կառուցման ծախսերն ամբողջությամբ:

Հավելված

Նոր սպառողի կամ սպառողի սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարների

**Աղյուսակ 1**

**Մեթոդիկա 1. 0.4 (0.22) կՎ լարմամբ միացող առանձնատների կամ առևտրային սպառողների ստանդարտ միացման վճարները**

1. 0.22 կՎ լարմամբ միացվող առանձնատների և առևտրային սպառողների ստանդարտ միացման վճարները որոշվում են համաձայն հետևյալ աղյուսակի.

Միացման տեսակը	Միացվող առավելագույն հզորությունը	Ստանդարտ միացման վճարը հազար դրամ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը)	
		Երևան քաղաքի տարածք	Հայաստանի Հանրապետության տարածք (բացառությամբ Երևան քաղաքի)
Միաֆազ (0.22 կՎ)	10 կՎԱ	65	53
	14 կՎԱ	91	62
Միացման ուժեղացում	10կՎԱ-ից 14 կՎԱ	26	9

2. 0.4 կՎ լարմամբ միացվող առանձնատների և առևտրային սպառողների սպառման համակարգերի ստանդարտ միացման վճարները (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$V_{ստ} = V_h + V_{փ} * \eta_{հզ} * \sigma_q ,$$

որտեղ՝

$V_h$  - հաստատուն ծախսերի մեծությունն է, որն ընդունվում է հավասար 203000 (երկու հարյուր երեք հազար) դրամի,

$V_{փ}$  - փոփոխական ծախսերի մեծությունն է, որը յուրաքանչյուր կՎԱ-ի համար ընդունվում է հավասար 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամի,

$\eta_{հզ}$  - Դինոդ անձի կողմից պահանջվող հզորությունն է (կՎԱ),

$\sigma_q$  - ծախսատարության գործակիցն է, որը Երևան քաղաքի վարչական տարածքում ընդունվում է հավասար 1.4-ի, Հայաստանի Հանրապետության մյուս տարածքներում՝ հավասար 1-ի:

(աղյուսակը խմբ. 04.05.08 N 225-Ն, 27.06.11 N 308-Ն, 07.12.11 N 568-Ն)

**Աղյուսակ 2**

**Բազմաբնակարան շենքի բնակարանների և առևտրային սպառողների միացման վճարները միաֆազ միացման դեպքում (վերնագիրը խմբ. 30.05.12 N 188-Ն, 06.03.13 N 63-Ն)**

հազար դրամ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը)

Միաֆազ միացմամբ բնակարանների և առևտրային սպառողների քանակը	Մեկ բնակարանի կամ առևտրային սպառողի միացման վճարը միաֆազ միացման դեպքում	
	10 կՎԱ հզորություն	14 կՎԱ հզորություն

	1-ին գոտի	2-րդ գոտի	1-ին գոտի	2-րդ գոտի
մինչև 25	66	55	92	58
25 ÷ 40	59	48	83	50
41 ÷ 60	52	41	75	45
61 և ավելի	46	35	68	40

1. 1-ին գոտի՝ Երևան քաղաքի տարածքն է:

2. 2-րդ գոտի՝ Հայաստանի Հանրապետության տարածքն է, բացառությամբ Երևան քաղաքի տարածքի:

(աղյուսակը խմբ. 04.05.08 N 225-Ն, 30.05.12 N 188-Ն, 06.03.13 N 63-Ն)

**Աղյուսակ 3**

**0.4 ԿՎ ԼԱՐՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՑԻՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ**

(աղյուսակն ուժը կորցրել է 27.06.11 N 308-Ն)

**Աղյուսակ 4**

**Մեթոդիկա 2. 6 (10) կՎ լարմամբ միացող առևտրային սպառողների ստանդարտ միացման վճարները**

1. 6 (10) կՎ լարմամբ միացվող սպառողների սպառման համակարգերի ստանդարտ միացման վճարները (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$V_{ստ} = V_h + V_{փ} * \eta_{հզ} * \sigma_q ,$$

որտեղ՝

$V_h$  - հաստատուն ծախսերի մեծությունն է, որն ընդունվում է հավասար 846000 (ութ հարյուր քառասունվեց հազար) դրամի,

$V_{փ}$  - փոփոխական ծախսերի մեծությունն է, որը յուրաքանչյուր կՎԱ-ի համար ընդունվում է հավասար 2150 (երկու հազար հարյուր հիսուն) դրամի,

$\eta_{հզ}$  - Դիմող անձի կողմից պահանջվող հզորությունն է (կՎԱ),

$\sigma_q$  - ծախսատարության գործակիցն է, որը Երևան քաղաքի վարչական տարածքում ընդունվում է հավասար 1.4-ի, Հայաստանի Հանրապետության մյուս տարածքներում՝ հավասար 1-ի:

(աղյուսակը խմբ. 04.05.08 N 225-Ն, 07.12.11 N 568-Ն)

**Աղյուսակ 5**

**35 ԿՎ ԼԱՐՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՑԻՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ**

միլիոն դրամ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը)

Միացվող հզորություն	Ստանդարտ միացման վճարը՝ միացնող գծի մինչև 12 կմ երկարության համար	Վճարը՝ 12 կմ-ն գերազանցող յուրաքանչյուր 250 մ գծի համար

≤3000 կՎԱ	21,70	1,28
3001÷4 000	26,19	1,70
4001÷5000	30,67	2,13
5001÷6000	35,15	2,55
6001÷7000	39,63	3,00
7001÷8000	44,11	3,40
8001÷9000	48,59	3,83
9001÷10000	53,08	4,25
10001÷11000	57,56	4,68
11001÷12000	62,04	5,10
12001÷13000	66,52	5,53
13001÷14000	71,00	5,95
14001÷15000	75,48	6,38

(աղյուսակը խմբ. 04.05.08 N 225-Ն)

**Աղյուսակ 6**

**110 ԿՎ ԼԱՐՄԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՈՂ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ**

միլիոն դրամ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը)

Միացվող հզորություն, ՄՎԱ	Ստանդարտ միացման վճարը՝ միացնող գծի մինչև 25 կմ երկարության համար	Վճարը՝ 25 կմ-ն գերազանցող յուրաքանչյուր 0.5 կմ գծի համար
≤15	102,93	5,52
16÷20	136,25	7,37



21÷25	169,55	9,21
26÷30	202,86	11,05
31÷35	236,19	12,89
36÷40	269,50	14,73
41÷45	302,80	16,57
46÷50	336,12	18,41

*(աղյուսակը խմբ. 04.05.08 N 225-Ն)*

*(հավելվածը խմբ. 04.05.08 N 225-Ն, խմբ., փոփ. 27.06.11 N 308-Ն, խմբ. 07.12.11 N 568-Ն, փոփ., խմբ. 30.05.12 N 188-Ն, 06.03.13 N 63-Ն, փոփ., լրաց. 12.02.14 N 17-Ն, 31.05.17 N 219-Ն, լրաց. 28.08.19 N 316-Ն)*